

Լ. ԽԱԶԻԿՅԱՆ, Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԶՊԵՏՔ Է ՃՐԱՏԱՐԱԿՎԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Առանձնատիպ Հայկական ՍՈՒ Գրառաքյունների Ակադեմիայի  
1949 թ. № 2 «Տեղեկագրը»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

9(47.955)(00) 37528

H-28 Խաչիկյան և Հակոբյան

Կայսերական հրապարակ

Այս պարհմական սկզբանքուր-

卷之三

Հ/34309  
90(47-925)  
Խ-28

ԵՎԱՆԴԻՍ Է. 1961 թ.

ԴՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ԶՊԵՏՔ Է ՀՐԱՏԱՐԱԿՎԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂՅՑՈՒՐՆԵՐԸ

(Պրոֆ. Աշ. Աբրահամյանի կողմից Ստեփանես Օրբելյանի անվամբ  
հրատարակված «Ժամանակագրության» առնչությամբ)

Հայկական միջնադարյան բազմաժաղար-  
եագրերը, որոնց գույքը մասր դեռևս հրա-  
մարակվուծ չէ, ունեն Համախարհային նշա-  
ռակություն:

Այդ ձեռագրերի ուսումնասիրության հի-  
ման վրա պետք է լուծվեն միջնադարյան Հա-  
մատանի և հարեան կրկների սոցիալ-տնտե-  
սական կյանքի դեռևս շլուսարանված բազմաթիվ  
զրորժություններ: Նրանք պետք է հարստացնեն սո-  
ցիալական շարժումների ուսումնասիրման առ-  
շա բազան՝ նորանոր նյութերով, նրանց հա-  
ստատ տղյալների մանրազնին ուսումնասիրու-  
թյան միջոցով պետք է որոշվեն այն ճանա-  
զարժները, որոնցով պարզացել է գիտական  
շիտը հին և միջնադարյան Հայաստանում, և  
տեղծվել են ամեզերագիտության, մաթեմա-  
տիկայի, բժշկագիտության, արիմիայի և այլ  
ուժությունների վերաբերյալ այն բազմաթիվ  
հայկական պատմության և գրականության ինստի-  
տուտների առաջ դրված է շատ կարենոր մի-  
և խրախուսվում է ՍՍՌՄ Գիտությունների  
հկադեմիայի կողմից:

Հայաստանի գիտական հաստատություննե-  
րի և առաջին Հերթին Գիտությունների Սկզբե-  
իալի պատմության և գրականության ինստի-  
տուտների առաջ դրված է շատ կարենոր մի-  
և խրախուսվում է արդի գիտության պահանջները  
բավարարող սկզբունքներ՝ մեր ձեռագրերի  
հրատարակության համար:

Վերջին սարիներս Հայաստանի գիտական  
հաստատությունների կողմից հրատարակվել են  
մի շարք պատմական մեծ արժեք ունեցող  
բնագրեր, որոնք շեն կարող բավարարել օր ա-  
վուր զարգացող մարդուստական պատմագրու-  
թյան պահանջներին:

Մի օրինակի հիման վրա փորձենք հիմնա-  
վորել մեր ասածը:

Քննության ենթակա բնագիրը 13-րդ դարի  
գատմաթյան համար հետարրերական տեղեկու-  
թյուններ պարունակող մի ժամանակագրություն  
է, որ լույս է տեսել 1942 թ. Հայկական  
ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Պետ. Գիտ.

գրատան (Մատենադարանի) հրատարակու-  
թյամբ, պատմ. գիտ. թեկնածու (այժմ դոկ-  
տոր-պրոֆեսոր) Աշ. Աբրահամյանի համառոտ  
առաջարանով և աշխատությամբ:<sup>1</sup>

Այդ համառոտ առաջարանում (էջ 3-7) հրատարակիչն աշխատել է պարզել ժամանա-  
կագրության հնդինսկի հարցը և որոշ տեղե-  
կություններ հաշորդել ժամանակագրության  
միակ ձեռագրի (№ 8481) և իր կողմից կա-  
տարգած հրատարակության մասին:

Պրոֆ. Աշ. Աբրահամյանի հազորդմամբ  
ժամանակագրության հեղինակը 13-րդ դարա-  
շրջանի նշանավոր մատենագիր, «Պատմութիւն  
Նահանգին Սիսական» մեծածավալ և արժեքա-  
գոր աշխատության Հեղինակ, Սյունյաց մետ-  
ուսպոլիտ Առնիքաննոս Օրբելյանն է:

Իր այս հպակացությունը (որն ըստ նրա  
կասկածի ենթակա չէ), նա հիմնավորել է  
ժամանակագրության մեջ պտնված մի վկա-  
յությամբ, որը ասված է. «... Ես նուաստ Ստե-  
փանինոս անուամբ այցելու կարգեցից ի գաւա-  
զանս սկիզբն արարեալ»: Բնագրի այս հատ-  
վածին կցած ծանոթագրության մեջ (էջ 22,  
հանոթ. 2-րդ) հրատարակիչը գրում է. «Ստե-  
փանինոս Օրբելյանի անվան միակ հիշատակու-  
թյունն է սա, որը զշխավոր կովաններից մեկն  
է հանդիսանում ներկա «Ժամանակագրու-  
թիւն»-ը նրան վերագրելու հարցում»: Աւշադիր  
կերպով բնում ենք առաջարանը մյուս  
սպլիտի կովաններից հետ ծանոթանալու  
նպատակով, սակայն բացի սրբն ժամանակա-  
գրության ու Ստ. Օրբելյանի հանրահայտ  
«Պատմութիւն» երեք տոքրիկ համագրությու-  
նից, այլ կովաններ չենք գտնում: Անհրաժեշտ  
է համառոտակի ծանոթանալ այդ համագրու-  
թյուններին նույնականացնելու համար իր «Պատմութիւն»

1 Սույն ժամանակագրությունը, մինչեւ  
հրատարակվելը հայտնի է եղել միայն սուկտ-  
վաթիվ ժամանակագրեաների, որոնք իրենց որոշ աշ-  
խատություններում համառոտ վկայություններ  
են բարել նրանից:

նահանգին Սիստեման աշխատության մեջ որում է՝ «եկն և շահանձրագին որ եռայր շամանս և յանկըզինս ի տու, և ի գիշերի եկեր և մարտին մեծ մինչ ի ծովն Ավկիանոս և էած սով տո հասարակ... տապաստ անկեալ լինէին լիրանց և դաշտից և ձորոց, սակա որոյ և անկաւ գայլ մարդակեր. և զմնացեալսն ի սրոյն, յօձէն, ի սովոյն և ի մահուանէն նորա գիշատեալ սատակէին»:<sup>1</sup>

Սույն հատվածի դիմաց, առաջարանում որված ենք գտնում հրատարակվող բնագրից մի հատված, որը հրատարակչի կարծիքով պետք է Հիմնավորեր Պատմության և Ժոմանակրության հեղինակների նույնության մտսին իր հայտնած ենթադրությունը: Այդ հատվածը հետեւալի է. «... և զինի այսորիկ ամենայն ցառումն և պատուհաս բազմացաւ յաշխարհիս մեր շարաշշումքը. զի ի շուշու և յամանս և յանկողինս եռային ի տուէ և ի գիշերի, և եկն մարախ սաստիկ և եկեր մինչ ի ծովն Ավկիանոս և ապա սով սաստիկ, որ շե էր եղեալ յաշխարհի և ապա գայլ ժարդախանձ. այսպէս տեսիլ եղաք ամենայն ժսեղեաց»:<sup>2</sup>

Տարբեր բնագրերից վերցված վերոհիշյալ Երկու հատվածների համադրության մեջ շոշափվող եզրներ անշուշտ կան, սակայն անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ այդ դեպքը կատարված է Ստ. Օրբելյանի

### Ժոմանակրություն Էջ 26

«Մեծ բարեպաշտ բրիսունէից յոյսն Առանցուղէ խաթունն մեռաւ ընդ Հուլառուին և ասին՝ զեղակուր հալ. լուին յանիծեալ Սահիպէն»:<sup>3</sup>

Ինչպես տեսնում ենք այս հատվածներից ժամանակագրության հեղինակը Հուլառուի կնոջը կոչում է Առանդուզ, իսկ Ստ. Օրբելյանը՝ Ծննդուզ, ժամանակագրության հեղինակը Հուլառուի կնոջը համարում է «մեծ բարեպաշտ, բրիսունէից յոյս...», իսկ Ստ. Օրբելյանը՝ Հուլառու դանիլ: Համարում «... մեծ և բարեպաշտ արրաջն աշխարհակալ, յոյսն և ակրն-իալութիւնն բրիսունէից...», ժամանակագրության հեղինակը նրանց թունավորողին՝ կոչում

1 Սույն հատվածը մեջ է բերված Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիստեման» աշխատության Դուկասյան հրատարակությունից (Թիֆլիս, 1910 թ., էջ 400):

2 Մատենադարան N 8481, էջ 206 ա և բ: Բնագրում «յաշխարհիս վի., «յաշխարհու» և մինչ իւ վի., «մինչեւ իւ»:

ծննդից տարիներ առաջ՝ 1225 թվականին: Այդ նկարագրության համար, ինչպես Ստ. Օրբելյանը, այնպես էլ բնագրերով ժամանակագրության հեղինակը միմյանցից անկախ կարող էրն օգտագործել դեպքերին ժամանակակից ու ականատես մելի կողմից գրված որևէ աղբյուր: Ռատիք այս համադրությունը «կարենը կովանի» դեր չի կարող կատարել:

Երկրորդ համադրությունը վերաբերում է Փնդումտար սուլթանի կողմից 1268 թ. Անտիոքի գրավման վեցությանը: Ստ. Օրբելյանի Պատմության մեջ «Անտիոք» և «Փնդումտար» ձեերի փոխարեն մեր ժամանակագրությունն ունի «Անտար» և «Փունտիդար» ձեերը, բացի այդ, Օրբելյանը հազորդում է, որ Փնդումտարը «Մովացոյց զմէջ պարսպին», իսկ ժամանակասրության հեղինակը՝ «յատակեցին» և ծովացուցին զբաղարնը:

Ակնհայտ է, որ 3-4 տողանոց դեմ-դիմաց դրված այդ հատվածները որքան նմանություն՝ այնքան էլ տարբերություններ ունեն Ժիմյանց հանդես, ուստի բնագրերով ժամանակագրության հեղինակի որոշման գործում նույնպես անզոր են:

Ավելի մեծ սպասելիքներով մոտենում ենք վերջին գեղարեւը կովանինք: Երբորդ համադրությամբ դեմ-դիմաց բրված են հետեւալ հատվածները:

### Ստ. Յըրեւեան «Պատմութիւն...» Էջ 419

«Բայց մեծ և բարեպաշտ արրաջն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն ըրբունէից, Հուլառու դանիլ մեռանի ի շ 713 թուին. ընդ նմին և ամենօր նեալն Տօնդուզ խաթունն կին նորա, որը դեղակուր եղեն ի բազմանար խօսալին Սահիպէն»:

Է «անիծեալ Սահիպ», իսկ Ստ. Օրբելյանը՝ «բազմանար իւշայ Սահիպ», միմյանցից տարբեր են նաև այդ հատվածների շարահյուսությունն ու կառուցվածքը: Միակ ընդհանրու-

3 Հրատարակության մեջ դ-ր Ս. Արքահամյանը այս տարբերությունը, որը ագրել է՝ «Անտիոքի» փոխարեն դրելով «Անտիոք»:

4 Զեռագրում կարդում ենք «Առանդուզ» վի. «Առանդուզ»:

5 Առաջարանում ամենուրեք հրատարակված բնագրի էջերը ցույց տալու փոխարեն, ցույց են տրված ձեռադրի էջերը: «Բուքն» ընդգրծված բարի առթիւ հատարակիչը գրում է՝ «կրկնակի իմաստով է դործածված» (Էջ 26, ծանոթ. 7), հավանաբար ցանկանում է ասել, որ «բուքն» բարի սկրիուբն ը բարի հապավված չեն է:

թյումը, որ կա վերոհիշյալ երկու հատվածների միջև, այդ պատճվու նյութի նույնությունն է, բայց չ:՝ որ պատմական միենույն իրադրությանը կարող էին անդրադառնալ միմյանցից անկախ մի շաբթ ժամանակակից պատմիչներ: Ռւստի վերոհիշյալ երրորդ համադրությունը նույնպես ժամանակագրության հեղինակի որոշման գործում չի կարող կատարել «գլխավոր կովանի» դեր:

Այսպիսով, չնայած հրատարակիչն իր աւագարանում և մեզ արդեն հայտնի ծանոթաւության մեջ ակնարկում է մի քանի «գլխավոր կովանիների» մասին, սակայն հեղինակի որոշման գործում նրա միակ կովանը «ժամանակագրության» այն հատվածն է, որը հեղինակը հայտնում է իր անունը («Ես նույնը Ստեփաննոս անուամբ այցելու») և որին հրատարակիչը կցել է իր ծանոթադրությունն այն մասին, որ այդ «Ստեփաննոս Օքքելանի անգան միակ հիշատակությունն է»:

Այս ծանոթադրությունն իրականության չի համապատասխանում: Ինչպես տեսանք, ժամանակագրության հեղինակը հայտնում է միայն իր անունը Ստեփաննես և ակնարկ անգամ չի

#### Ժամանակագրություն 12 24

«Եւ յետ թժ. ամի խորասմին ոչ շատացար այնու, այլ եկն ազգն նետողաց թաթարն, անընդել և ահագնատեսիլ և անյագ զազանն և ծածկեցին զնոնես աշխարհի, զորոց զաննաւրին գործուն և անցու աղէտիցն ոչ բաւէ լեզու բանիւ բացայալու, այլ միայն լուել...»:

անում այն մասին, որ ինքը Ստեփաննոս Օքքելան հանրահայտ մատենագիրն է:

Այսպիսով, Մատենադարանի կողմից հրատարակված կարևոր այս ժամանակագրության Հեղինակի հարցը չի լուծված հրատարակչի կողմից: Հասկանալի է, որ նախքան հեղինակի մասին վճռական որին, խոսք ասելը, անհրաժեշտ էր ամելի մանրամասն կերպով համեմատել պատմուկան այդ երկու սկզբնաղբյուրները միմյանց, քան արել է հրատարակիչը: Անհրաժեշտ է նոր, բայց հիմնավոր փաստերով ցույց տալ այս երկու հեղինակների նույնությունը, այն, ինչ չի հաջողվել քննարկվող ժամանակագրության հրատարակչին, և կամ, համոզվել այն բանում, որ Ստեփաննոս անունը կրող այս երկու հեղինակները տարբեր անձնավորություններ են: Այս առումով կարենոր նշանակությունն ստանում քննարկվող ժամանակագրության և Ստ. Օքքելանի պատմության մեջ միենույն պատմական իրադարձության մասին եղած, մի շարք այլ հատվածների համեմատությունից ստացված արդյունքները: Համադրությամբ մեջ ներ բերում այդպիսի բնորոշ հատվածներից մի քանիսը, յուրաքանչյուրի մասին անելով մեր շիտողությունները:

Ստ. Օքքելան Պատմ. նահանգին Սիստեմական:

«Եսկ յետ մետասան ամի զարթոյց Տէր յարեւելից զազգն..., որ մուղալը կոչէին, ... անաստուածը և անօրէնը, բայց բնութեամբ օրինացն էարդարեալը, ատեցողը աղտեղի գիջութեանց և ամենայն վնասակար գործոց, արդարամիտը առ միմեանս, միամիտը և հնազանդ առաջնորդի իւրեանց, իրաւարար և իրաւադատը՝ իսկ բարուք աղքատը և ընշարադշը, նեղէլք և կեղերիչը մարդկան, պատկերով յոյժ զեղեցիկը և լերկը ըստ կանացի ուխմաց, և ծանօթը քրիստոնեան հաւատոյ, և յոյժ սիրողը քրիստոնէից...»<sup>1</sup>

ուստի «իրաւարարը և իրաւադատը և այլն ժամանակագրության հեղինակը հայտնում է, որ մոնղոլների զործած ավերումներն ու խթժություններն այն աստիճանի աղետարեր են եղել, որ ոչ բաւէ լեզու բանիւ բացայալու», մինչդեռ Օքքելանը լրում է այդ մասին, և լրում է որիտումնավոր կերպով, որովհետեւ իր հայրենի կալվածքը մոնղոլների իշխանության օրոք էր «իր զտապանն նոյեան ի մէջ աշխարհակործան սկսացն...»<sup>2</sup>

1 Ստ. Օքքելան—Պատմութիւն նահանգին Սիստեմական, Թիֆլիս, 1916, լ. 400—401:

2 Նոյն տեղ, լ. 431—432:

Ժամանակագրության 25 էջում կարդում ենք՝ «Յայտմ (ԱԶԵ-1236) ամի էառ Չորմանն և Զաղաթայն զբոլոր Երկիրս մեր՝ զԱնի, զԿարս, զԿատէ, զՄուրը Մարիչ»:

Ժամանակագրության սուղ էջերում, ինչպես տեսնում ենք, մեր հեղինակն անհրաժեշտ է համարել նշել Հայաստանի նշանավոր այն բաղաքները, որոնք նվաճվեցին մոնղոլների կողմից 1236 թվականին: Բնական է ենթադրել, որ նույն հաղինակը դրելով ընդարձակ պատմություն, պետք է որ կանգ առներ Հայաստանի պատմության համար կարենը այդ իրադարձությունների վրա և մանրամասն տեղեկություններ հաղորդեր Անիի, Կարսի և մյուս բաղաքների անկման մասին: Այնինչ Ստ. Օրբելյանն իր բնդարձակածավալ պատմության մեջ ավելորդ է համարել նույնիսկ հիշատակել մոնղոլների կողմից այդ բաղաքների գրավման փաստն ու տարեթիվը, և բավարարվել է գրելով միայն, սիսկ միւս կողմն եկին (մոնղոլները — և. և. Վ. 2.) ընդ մէջ աշխարհիս... Եւ ուտուտկեալ, փոթորկեալ հասին յաշխարհս մեր. և առ հասարակ տիրեալ հնագանդեցին զամենայն տիեզերս... Առին և զՄուրպատական, ունուան և զՀայւատան, զՄիրս և զՀոռոմս...»:<sup>1</sup>

### Ժամանակագրություն Էջ 31

«... Հրաւիրեցին զմեկ և զայլ եպիսկոպոսն և զայլ իշխանս Արևելից երեալ ի թաղաւորութիւնն մեր ի Սիօ՝ յընդբութիւն նորոգ Հայրապետուն, որում տնտպարապ գտեալ ոչ ժամանեցաք...»<sup>2</sup>

Մինույն գեպքի մասին գրված այս երկու Հատվածները շնորհ կուրս եկած լինել մինույն գրչից: Ստ. Օրբելյանը հրաժարվում է կաթողիկոսական ընտրություններին մասնակցելուց, որովհետեւ թագ զիսէ Կոստանդին կաթողիկոսի զահազրկման իրական-թղղարտկան դրդապատճառները, և Կոստանդինի թշնամիներին համարում է իր կուսակցության թշնամիներ, իսկ Ժամանակագրության հեղինակը Կիլիկիա մեկներու հրավերը չի ընդունում սուկ զրադված լինելու պատճառով («անպարապ գտեալ ոչ ժամանեցաք»):

Ժամանակագրության մեջ՝ ԶԼ (=1281) Բիմականի դիմաց կարդում ենք.

«Մեռալ Մանկու Շէմուրն, եղբայր Ապաղանին ի Զաղաթոյն և Շիպառուին՝ ի Բաղդատ. և նստաւ լաթրան բնութիւնը Թագուդարն ԱՀ-

Ժամանակագրության հեղինակը ՈԿՍ (1212) թվականի տակ պատմում է Զաքարի և իվանե Կղբայրների մասին, որոնք ցանկանալով չմիարաններ զշայս և զՄիրս, Գետկա վանդում ժողով և կումարում «բազում հարանց և վարդապնտաց, ընդ որու Եին... Գոշ Մխիթարին, Մոնօնիկին և Տուրբիկին», նրանց չի հաջողվում դրուս բներել միաբանության գործը, ապա Զաքարին արշավում է Արտավիլ և վերադարձին (որ գալ աւճն այսինքն 1213 թվականին) մաշտում է ձանապարհին ու թաղվում «ի Սանահինն ուխտ» (Էջ 23): Հակառակ սպասածին Ստ. Օրբելյանն իր ծավալուն Պատմության մեջ վերոհիշյալ գեպքերին չի անդրադառնում, հայտնելով միայն, որ Զաքարին «... մեռանի ի 661 (1212) թուին (Էջ 398), այսինքն մի տարի առաջ ժամանակագրության տվյալից»:

Կոստանդին կաթողիկոսին կարգալույթ անելուց հետո կիլիկեցիր Սսում ժողով են գումարում, նոր կաթողիկոս ընտրելու համար ծողովին հրավիրվում են մասնակցելու Արևելյան Հայաստանից բազմաթիվ եպիսկոպոսներ և իշխաններ, բայց հրավիրվածներից շատերը, որոնց թվում նաև մեր ժամանակագրության հեղինակն ու Ստ. Օրբելյանը, հրաժարվում են Կիլիկիա մեկնելուց, լսենք նրանց.

### Ստ. Օրբելյան, Պատմ., Էջ 440

«Եւ յնու այսց բանից հրաւիրեալ էին զմեզ մեծարանօր դնալ ի ժողովն նորոգ ընտրութեան հայրապետի, որում պատախանեալ ասացար, մեր ոչ եմբ<sup>2</sup> հասու կամ խորհրդակից եղծման զի և նորոգմանն հաղորդեսցուք որ որ ինքնահամ էամօր եղծումն արար, նոյն է դնորոգ ընտրութիւնն հոդացէ...»<sup>3</sup>

Ժամանական՝ Մահմետի աւրինաւրն (Էջ 29):

Ստ. Օրբելյանի պատմության տվյալներով Թագուդար-Ահմատը նոտում է գաճի վրա ոչ թե Մանկու Դեմուրի, այլ Ապաղանի մահվանից հետո («յիստ մաղաղաբին») և ոչ թե 1281, այլ 1282 թվականին:

Ինչպիս անառարկելի կերպով ցուց են ուալիս վերոհիշյալ փաստերը, քննարկվող Ժամանակագրության ու «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության հեղինակները տարրեր անձնավորություններ են, ունեն հետաքրքրության ուրույն բնադավառներ, հաճախ միենույն պատմական դեպքի մասին հաղորդում են տարրեր, նույնիսկ հակասական տեղեկությունները Ռւատի և, Ժամանակագրության հրաժարակից պրոֆ. Աշ. Սրբահամյանը կատարել է

2 Թնագրում ահմբը ձեռվէ:

3 Ստ. Օրբելյան, Էջ 425:

1 Ստ. Օրբելյան — Պատմութիւն նահանգին Սիսական, Էջ 401—402:

ողբյուրագիտական սխալ՝ բնարկվող ժամանակագրությունը վերադրելով Ստեփանոս Օքանիանին:

Մեզ արդեն ծանոթ դիմավոր կովաններով ոռոշելով՝ ժամանակագրության հեղինակի հարցը, հրատարակիչը փորձել է նաև շոշափել սույն ժամանակագրության և Ստ. Օքանի Պատմության փոխհարարերության հարցը, և առանց որևէ փաստարկման հանգել է այն հերակացության, որ ժամանակագրությունը Օքանի էուղմից գրվել է, որպես սեղմ ծրագիր իր մեծածավալ Պատմության համար:

«Այսպիսով,— գրում է նա, — պարզվում է, որ Օքանի իր Պատմությունից առաջ գրել է ներկա «Ժամանակագրությանը», որից և օգտվն է Հետո «Պատմութեան» գրելու ժամանակ։ Այս փաստը Հայկական մատենագրության մեջ կարեոր փաստ է, որովհետեւ նա կոնկրետ նյութ է տալիս մեզ պատկերացնելու՝ թե ինչպես է կազմվել, ձևավորվել մեզ հասած այս կամ այն մատենագրի խոշոր երկը» (էջ 6):

Մի պահ ընդունենք, որ պրոֆ. Արքանամյանը ճիշտ է, և սույն ժամանակագրությունը հազմելուց հետո, Ստ. Օքանի ձեռնամուխ է եղել նշանավոր իր Պատմության շարադրմանը, օգտագործելով այն որպես կոնսպեկտ իր մեծածավար աշխատության համար։ Այդ գեպրում բնական է հնաբաղրել, որ Համառոտ ժամանակագրության մեջ ներմուծված բոլոր կարեոր պատմական և նշանակություններն ու տվյալները, այս կամ այն շտփով խմբագրվելուց և մանրամասնվելուց հետո, պետք է որ տեղ գտնեին նաև ընդուրակ Պատմության մեջ։ Սակայն իրականության մեջ այլ բան էնք տեսնում։ Ժամանակագրության մեջ կան մի շարք կարեոր դեպքերի և իրադարձությունների մասին նշումներ, որոնք տեղ չեն գտել Պատմության էջերում։ Մանոթանանը այդպիսի նշումներից մի քանիսի հետ։

1. ՈՉԴ ( = 1235) Շահնշահ որդի Զաքարէին էառ զԱռուր Սարի և Հոռմեցին էառ զՌուշայ՝ սիաւզ և աւերական» («Ժամանակ», էջ 25):

2. «ՅՉ ( = 1251) թին կատարեցաւ սուրբ Աստուծոյ Վանական վարդապետն...», (էջ 26):

3. «ՉԺԹ ( = 1270) կատարեցաւ սուրբ վարդապետն Վարդան Կիրակոս Կարգապետն ի Կիլիկիայ» (էջ 27),<sup>1</sup>

<sup>1</sup> Կետադրության հանոններ հրատարակի համար կարծես դոյլություն շունեն։ Հրատարակված բնագրում առանց վերջակետի երրեմն շարված են լինում մեկը մյուսի հետեւից տասից ավելի նախադասություններ։ Այս օրինակից Տեղեկագիր 2—6

4. «ՉԻԻ ( = 1276). Ֆայսմ ամի սպանաւ ի տաճկաց մեծ արքեպիսկոպոսն էղնկային»<sup>2</sup> Տէր Սարգիս և որդին իւր և այլ բահանայր, որոց գլխաւորքն Տութարն և Զալսպին պատմապին, Եւ ՅԱպաղայն ի Հոռմբ գնաց և վրէժինդիր եղեւ արևոն նորա և բազում ամիրայր էսպան և զնինիտա և եարբերդոյ երկիրն աւերեաց» (էջ 27—28):

5. «ՉԻԶ ( = 1277) Բաւգան նուին, ԺԵՄ—այլապլասայն կոտորեցաւ ի Փունդումտա(ր) սուլտանէն Մսրայ, և զՓարուանայն յԱլատազըն կոտորեցին և այլս բազումս սպանինս» (էջ 28):

6. ՉԼԶ ( = 1287) Զմեոն խիստ եղեւ, մեռան մեծ իշխանի ի Խաչէն՝ Աթարակ որդի Զալսլիին և Հառան թոռն Դա(ւ) փին, և ապա մեռու ձարն ի Տփիսիս (էջ 30):

Նման տեղեկությունների թիվը կարելի է բազմապատկել ցանկացած շափով, բայց ընդդարձակվելու կարիք չկա։ Վերոհիշյալ օրինակներից և հայորդ փաստերից կարելի է հանդել միայն մի նղրակացության, այն է՝ բննարկվող ծամանակագրության նեղինակ Ստեփանոսը և հանրահուշտ մատենագիր Ստեփանոս Օքանի առցըրեց անձնայություններ են։ Ժամանակագրության մեջ, ինչպես գիտենք արդեն այլ առիթներով, հեղինակն իր մասին տեղեկություններ է տալիս երկու անգամ՝ նախ ժամանակագրության վերնագրում, և որտեղ ասված է։ Ըստ նուաստ Ստեփանոս անուամբ այցելու...» (էջ 22), և երկրորդ՝ նախավերջին պարբերության մեջ, որտեղ կարդում ենք. «ՉԼԲ ( = 1289) ... ի ձեռն թղթոց մեծապատիւ արամ(ր)ըք Հրաւիրեցին զմեղ և զայլ եպիսկոպոսունս և զայլ իշխանու Արեկելից երթալ ի թագաւորու-

զատ (դրված վերջակետը խանգարում է հանգանալ թե Կիրակոսը Ն ( = 50) օրից հետո ինչ եղավ), կարելի է բերել մի շարք այլ օրինակներ։

2 Տպմած է, «Ճամամ» փիս. «Յայսմ», «Եզնիայի», ձեռադրում կարդում ենք «Էղնկային»։

3 Տպված է «որոնց», փիս. որոց։

4 Տպմած է «զինի Կիտա»։

5 Տպմած է «Յաւադն», փիս. «Յաւան»։ ԺԵՄ—այլապլատայն շի բացված. «ՅԱպլատայն» փիս. «ՅԱպլասայն»։ Ամրող Հատվածը տպագրում տեղափորված է ՉԻԶ ( = 1277) թվականից շատ վերև, այնպես որ, առանց ձեռագրին դիմելու անհնարին է պարզել այս Հատվածի տարեթիվը։

6 Հրատարակության մեջ վերնագրից սխալմամբ ձուլված է բնագրին։

թիւն մեռ ի Սիս՝ լինդրութիւն նորոգ Հայրապետին...» (Էջ 21):

Այս երկու վկայություններից պարզ է դառնում ժամանակագրության հեղինակի անունը՝ Ստեփանոս, և այն, որ նա եպիսկոպոս է («այցելուայ») և գործել է Արևելյան Հայաստանում: Հրատարակիչն իր առաջարանում հայտնում է, որ Արևելյան Հայաստանում, այդ ժամանակ որպես մատենագիր մեզ հայտնի է միայն մի Ստեփանոս Եպիսկոպոս—Ստեփանոս Օրբելյանը (Էջ 6): Ճիշտ է, նախորդ էջում նա հիշատակում է մի քանի Ստեփանոսների անուններ (Արճիշեցի, Սկևուացի և Կիլիկիցի), որոնց կողմից բնդօրինակված ձեռագրեր են հասել մեզ, սակայն մերժում է նրանց հեղինակությունը, որովհետև «այս Ստեփանոսները բոլորն ել, հարավային Հայաստանից են» (Էջ 6): Այս պնդումն արված է հասձեպորեն, առանց բննելու մեզ հասած ձեռագրական բոլոր վկայությունները: Միայն մեր Մատենադարանում պահպող հայկական ձեռագրերի գրիշների շարքում կան մի քանի այլ Ստեփանոսներ, որոնք հրատարակչի տեսադաշտից վրիպել են, և որոնք, ամենայն հավանականությունը, չործել են Արևելյան Հայաստանում, որունք հնա՞ Ստեփանոս Կարնեցի (գրիշ, № 2817 ձեռագրի), Ստեփանոս Հայրապետ (գրիշ № 4811 հաշոցի), Ստեփանոս քահանայ (№ 7663), ոմն Ստեփանոս (№ 3816) և Տարսացիձ-Ստեփանոս: Վերջինիս մասին տեղեկություններ ստանում ենք Մատենադարանի № 9150 ձեռագրից, որը մեզ շհասած մի ավետարանի հիշատակարան է, և դրված 1314 թվին Պողոս Կիլիկեցի գրչի կողմից:

Այս Ստեփանոսը ուստի լինելով Գլածուրյան համարարանի նշանավոր քարունապետ Եսայի նշեցու և Սարդիս վարդապետի մոտ ևնաև յիմաստասիրական արհեստո յոլով ժամանակու զեդերելով ի վիճակի էր զրել նման մի ժամանակագրություն, սակայն 1314 թվաւանին նա շատ երիտասարդ էր և դեռ նոր միայն պատրաստվում էր ոյաստիճան վարդապետութեան և եպիսկոպոսութեան տանն Սիւնեացը,<sup>2</sup> ուստի 1289 թվականին զժվառ թի այլ եպիսկոպոսների հետ մեկտեղ կանչված լիներ

1 Այս հիշատակառանը պահպում էր Մատենադարանի պատասխիների ֆոնդում, 1515 համարի տակ: 1944 թվին մուծվել է Զեռագրաց Տոնդ: Հնում պատկանել է Խոշիկ վրդ. Դադյանին և նկարագրված է նրա սեփականությունը կաղմող ձեռագրերի ցուցակի Բ հատորում:

2 Այս հատվածը գտնվում է հիշատակառանի սկզբի մասում:

Եկեղեցիա կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու Ալնուամենայնիվ սույն ժամանակագրության հեղինակի որոշման ուղղությամբ ձեռնարկվելիք հետագա աշխատանքների ընթացքում ուշադրություն պետք է դարձնել նաև այս Ստեփանոսի վրւ, որն ըստ ձեռագրի հիշատակարանի, Առ. Օրբելյանի եղբայր Զալալի որդին է:

Այժմ համառուսակի ծանոթանանը բնադրի հրատարակություն հետ:

Ստեփանոսը որպես ժամանակագիր Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկն է: Իր ժամանակագրության ներածականում նա որոշակիորեն հայտնում է, որ «Զայտ դաւագանը և չափ ժամանակաց գտաք հշդիւ սահմանեալ և եղեալ Սամուելի Տշ(մար)-տարան քահանայի զկարգս թագաւորաց և կայսերաց ընդ (որում եւ կաթողիկոսացն Հայոց, սկսեալ յառաջին ամէ (մարմբնա) նայուական մինչ ի ՌՃՂԵ ամն և ի ՌԽԲ թիւն (Հայոց):

Ինչպիս պարզվում է այս ներածականից՝ Ստեփանոսն իր ձեռքին ունեցելու ընդօրինակել է Սամվել Անեցու ժամանակագրության մի այնպիսի խմբագրություն, որն ավարտվել է 1193 թվականին: Եվ հենց՝ այդուղից էլ նա մկսել է իր ժամանակագրությունը, պարզ ու որոշ հայտնելով այդ ժաման ներածականին հաշորդող հատվածում «... ևս նուաստ Ստեփանոս անուամբ այցելու կարգեցից ի գաւաղանս սկիզբն արարեալ» (Էջ 22):

Հրատարակիչը հակառակ այս պարզ ցուցումի հայտնում է այն սխալ կարծիքը, որ «Օրբելյանը նպատակ չի ունեցել կազմել ինքնուրույն ժամանակագրություն», այլ դանկացել է լրացնել ու շարունակել Անեցու ժամանակագրութիւնը: թերթ 397ա-ից սկսած նա սկսել է կատարել մասնակի լրացումներ մինչև 202 թ, իսկ այնուհետև շարունակել է ինքը՝ առանց

3 Սամուել Անեցին հետեւ է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի առասպելական ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործածվող թվականից 2 տարի առաջ: ուստի Սամուելի, ինչպիս և Ստեփանոսի ժամանակագրության մեջ, ամենուրիք, ըրիսառնեական և հայկական թվականների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է: Ժամանակագրության մեջ շարադրված զեպքերի իրական տարեթիվը ստանալու համար պետք է առաջնորդվել հայկական թվականով զումարելով Նրան 551 տարի և կամ օրիստոնեական թվականից հանելով 2 տարի: Այս շատ կարևոր ինդիքը հրատարակչի ուշադրությունից վրիպել է և տեղիք է տվել մի շարք ժամանակագրության սխալների:

սահմանագծելու իր գրած «Ժամանակագրութիւն»-ը Սամուել Անեցու ժամանակագրութիւնից» (էջ 4):

Եվ որպեսզի ակնհայտ լինեն Սամուել Անեցու ժամանակագրության մեջ Ստեփանոսի կողմից կատարված լրացումները, պրոֆ. Արշակամյանը, ինչպիս հայտարարում է ինքը, համեմատել է Հրատարակվող բնագիրը Ս. Անեցու Ժամանակագրության տպագրի և հնագույն ձեռագրի (№ 5619) հետ, և այնուհետ, ուր Օրբելյանն արտագրել է Անեցուն, մենք (պրոֆ. Արքահամյանը) առնում ենք ժամանակագծի մեջ» (էջ 7): Սրանից հետեւմ է, որ քննարկվող ժամանակագրության սկզբի մասի (էջ 11—19) այն տվյալները, որոնք ժամանակագծի մեջ առնված չեն, սրատկանում են Ստեփանոսին Մենք ևս համեմատեցինք վերոհիշյալ բնագրերը միմյանց հետ և համոզվեցինք այն բանում, որ հրատարակիչը շափականց անուշադիր է կատարել վերոհիշյալ բնագրերի համեմատությունը: Այդ բանում համոզվելու համար բազմաթիվ ժամանակագրությունները քըննարկվող բնագրի 12—13 էջի վրա դտնվող և ժամանակագծերի մեջ շառնված, վեստ Սարգսին վերաբերող հատվածը նույնությամբ դտնվում է Սամուել Անեցու ժամանակագրության հրատարակած բնագրի 106 էջում:<sup>1</sup>

15-րդ էջում խոսվում է Լիպարիտի դավանագործությամբ: Բարսեղի կաթողիկոս օծվելու, Ռուղայի կողմից Գանձակի գրավման և այլ հարցերի մասին, այդ տվյալները դտնվում են Սամուել Անեցու ժամանակագրության 118-րդ էջում:<sup>2</sup>

Էջ 16-րդում Բարսեղ կաթողիկոսի մահվան, Դամասկոսի արքա Դըղուշի սպանության, Բերիարուվսի մահվան և այլ պատմական անցուդրսերի մասին եղած տվյալները, որոնք նույնպես բերված են տուանց ժամանակագրությունում են Ս. Անեցու ժամանակագրության 120—124-րդ էջերում:<sup>3</sup>

Եվ այսպիս ժամանակագծի մեջ շառնված բոլոր հատվածները, բացառությամբ Ստեփանոսի ժամանակագրության՝ չօ-րդ էջում դտնվող հատվածից, <sup>4</sup> նշյալիով հրատարակի այն հայ-

1 Սամուելի բահանայի Անեցույ հաւաքմունք է գրոց պատմաբաց; Վաղարշապատ, 1893: Տես նաև ձեստիքիրը № 1869, էջ 246 ա, № 1897, էջ 66 ա, № 5619, էջ 94 բ և ալին:

2 Զետ, № 1897, էջ 70 ա, № 1869, էջ 249 և այլն:

3 Զետ, № 1897, էջ 71 և—72 բ, № 1869, էջ 249 բ—251 ա, № 5619, էջ 100 բ և այլն:

4 Համոդված ենք, որ Ս. Անեցու ժամանակագրության տոկա խմբագրությունից որևէ մեկում էարելի է դտնել նաև այս հատվածը:

տարարությունը, որ Ստեփանոսը «ցանկացել է լրացնել» Ս. Անեցու ժամանակագրությունը, շի համապատասխանությունը իրականության իրականության շի համարատասկանում նաև հրատարակչի մէրւա հայտարարությունը, ըստ որի Ստեփանոսը շարունակելով Ս. Անեցու գործը; և գրելով իր Ժամանակագրությունը, շի սահմանագծի այն Ս. Անեցու ժամանակագրությունից:

Մենք սրդեն վերեւամ մեջ բերեցինք Ստեփանոսի ներաժականը, ուր հեղինակը շատ որոշակի հայտնում է լինելոցողին, որ Ս. Անեցին իր Ժամանակագրությունը հասցրել է մինչև 1193 թվականը (հայոց Ուսի) և ինքը նպատակ է դրել շարունակել այդ թվականից հետո կատարված պատմական կարենը դեպքերի շարադրությունը: Եվ այդպիս է արել է, գրելով մի ժամանակագրություն, որն ընդգրկում է շուրջ մեկ դարու անցուդարձ՝ սկսած 1194 թվականից մինչև 1290 թվականը: Վերոհիշյալ ժամանակագրությունը պարզ է դառնում, որ Ստեփանոս Օրբելյանի անունով հրատարակված ժամանակագրության ճիշտ կես մասը (էջ 11—21, սուշ 27) պատկանում է Ս. Անեցուն, և Ստեփանոսի ժամանակագրության հետ առնչվում է միայն այնքանով, որ շատ վերջինիս նպատակն է եղաւ շարունակել Ս. Անեցու ժամանակագրությունը: Ուստի հրատարակիչը սիալ է գործել Ստեփանոսի անվանը հրատարակելով Մատենադարանի № 8481 ձեռագրի 197ա—203 բ էջերի բազմաթիվ հատվածները: Ստեփանոսի ժամանակագրությունը սկսվում է ձեռագրի 204 էջից և հենց այդտեղից ևլ պետք է կատարվեր նույն հրատարակությունը:

Ստեփանուն իր ժամանակագրությունը կազմել է Ս. Անեցու ժամանակագրության օրինակով՝ շորս սյունակեներով: Առաջին սյունակում վերից-վար, հաջորդաբար շարված են բրիտոններկան տարեթվերը, սկսած ՌԾՂՁ (1196) թվականից մինչև ՌՄՂԲ (1292):<sup>5</sup> Երկ-

5 Համաձայն մեր Մատենադարանի № 5619 ձեռագրի, Ս. Անեցու ժամանակագրությունը վերջանում է 1176 թվականով, նշանակում է մեր Ժամանակագրության հեղինակ՝ Ստեփանոսը չի իմացել, որ Ս. Անեցու ժամանակագրությունը մինչև իր ձեռքը հասնելը շարունակվել է ուրիշի կողմից (1176—1193 թվականների շրջանում), այդ պատճառով ել այս հատվածը Ստեփանոսը նույնպես վերագրել է Ս. Անեցուն:

6 Այժմ գործածվող թվականով՝ 1194—1290 թվականները:

րորդ սյունակում տրված են Կիլիկիայի հայ թագաղիրների գաճակալության տարեթվերը, սկսած 12-րդ Ա.-ից մինչև Հեթում թ: Երրորդ սումակը վերաբերում է հայոց կաթողիկոսներին, սկսվում է Դրիգոր Ս Տղայից և հասնում մինչև Աստվանոս Դ. Հոռմկլայեցու գահակալության առաջին տարին։ Չորրորդ սյունակում, սուազին սյունակին համապատասխան, շարված են հայկական մեծ տոմարի տարեթվերը սկսած Դեբ (1193)-ից մինչև ԶԼԹ (1290)։

Ահա այս շորս սյունակների աջ և ձախ կողմերում տրված են համասոտակի տեղեկություններ նշված ժամանակամիջոցում կատարված պատմական կարևոր անցուդարձերի մասին։ Ժամանակակրության սյունաշարային այս ձեր որքան էլ ուշագրավ ու հետաքրքիր է, նույնքան էլ ընդօրինակությունների ընթացքում տեղիք է տալիս բազմապիսի աղավաղումների։ Բավական է մի որևէ տեղեկություն արտագրել փոքր ինչ վերև կամ ներքև իր որոշակի տեղից, որպեսզի այդ դեպքը մի բանի տարով առաջ կամ ետ ընկնի իր իրական տարեթվեց։ Զեական այս առանձնահատկության վրա հատուկ ուշադրություն է դարձրել քննարկվող ժամանակագրության մեջ հասած միակ ձեռագրի գրիչը։ Վերջինս առարեթվերի շփոթությունից խոսափելու համար դիմել է շատ խելոք մի միջոցի։ Երբ ուեղի սղության պատճառով նա ստիպված է՝ եղել այս կամ այն վկայությունն իր տարեթվից մի փոքր վերև կամ ներքի տեղավորել, նա համապատասխան տարեթվերի ու վկայությունների վրա միանման նշաններ է դրեւ, որով և կարողացել է ակրնբախ դարձնել տվյալ հատվածի ճշտիվ տարեթիվը։ Այսպես, օրինակ, բնագրի 208 ա էջում ԶՓ (1261) թվականի դիմաց կարդում ենք. «Թաթարն զշալու աւերեաց և Մանկու դանն զնաց լիստուած»։ Այս դեպքերը, սակայն, տեղի են ունեցել ոչ թե ԶՓ, այլ ԶԹ (1260) թվականին, ձեռագրի գրիշը այս վկայության դրանցման վրա և ԶԹ տարեթվի դիմաց դրել է աստղածե մի նշան՝ \*։ Այսպիս է վարվել գրիշը նաև ԶԵԾ (1259) թվականին կատարված մի դեպքի (չշուկաւոյն պաշարեաց ամ մի զՄուփարդինն է, 208 ա) դրանցման ժամանակ, երբ տեղ չինելու սյատնառով ստիպված է եղել այն տեղավորել ԶԹ (1260) թվականի դիմաց։ Նման փուստեր կարելի է տեսնել նաև ձեռագրի 205 ա, 205 թ, 206 ա, 206 թ, 207 թ, 208 թ, 211 թ էջերում։

Հրատարակիչն ուշադրություն շղարձնելով կարևոր այս նախազգուշացման վրա, շատ հատվածներ սեղափորել է ոչ թե իրենց տարեթվերի դիմաց, այլ ճիշտ այն տեղում, ուր տե-

ղի սղության պատճառով ստիպված է եղել տեղավորել ձեռագրի գրիշը։

Բերենը մի օրինակ։ Զեռագրի 205 ա էջում ՈՆԴ (=1205) թվականի դիմաց կարդում ենք. «... ի սույն ամի Ռուբնադին սուլտանն էառ զՇարնոյ քաղաք և կոտորեցաւ ի Զարացրիայէ»։ Հատուկ նշանով («») գրիշը ցույց է տվել, որ սույն դեպքը կատարվել է ռՕԾԱթվականին, մինչդեռ սրով. Աշ. Աբրահամյանի հրատարակության մեջ (էջ 22) տեղավորվել է ՌԾԵ (1208) թվականից ցած և այն էլ ոչ թե սյունակների աջ կողմում (ինչպես ձեռագրումն է), այլ՝ ձախ։ Նման օրինակներ կարելի է բերել նաև բնագրի 205 թ (հրատ. էջ 23), 206 ա (հրատ. էջ 23), 211 թ (հրատ. էջ 30) և այլ էջերից։

Հրատարակված բնագրում կան նաև այնպիսի տարեթվերի բազմաթիվ աղավաղումներ, որոնք արդյունք են միայն հրատարակչի անփութության։

Բերենը մի բանի օրինակ։ Ժամանակագրության շատ ճիշտ տվյալի համաձայն մոնղոլներն Անին, Կարսը, Սուրբ Մարին (Սուրմալու) և այլ բաղաբներ գրավել են ՌԶԵ (=1235) թվականին, հրատարակության մեջ այդ կարեւոր դեպքերի մասին եղած հատվածը տպված է ՌԶԲ—ՌԶԴ (=1233—34) թվականների առանքում (էջ 25), ուստի սույն դեպքը վերագրված է 1233 թվականին։

Բնագրում հայկական ՌԶԱ (1232) թվականի դիմաց գրված է «Առ այսու ժամանակաւ փայլէր ծերացնալ աւուրբք մեծ վարդապետն Վանական, աշակերտ Գոշին...» (էջ 207 ա)։ Այս տվյալը հրատարակիչը տեղավորել է 25-րդ էջի կենտրոնում, ուստի և հնարավոր չէ պարզել, թե այն որ տարեթվին է վերաբերում։

Բնագրում կարդում ենք «ՌԾ» (=1201). Զարարէ էառ զԱնի» (էջ 205 ա), հրատարակության մեջ այս դեպքը գրված է ՌԽԲ (1200) թվականի դիմաց (էջ 22) և այլն, և այլն։

Հասկանալի է, որ բնագրի այսպիսի հրատարակությունը շի կարող պատմական վստահելի աղոյուրի դեր կրատարել։

Պրոֆ. Աբրահամյանը բնագրի 207 թ էջի «Յովհանէս» անվանը կցում է ծանրթագրություն այն մասին, որ «Յովհաննէս» բնագրում գրված է մեկ «ն»-ով (էջ 26, ծանոթ. 1)։ Այս և նման ծանրթություններից ընթերցողը առաջին հայացքն ստանում է այն ոչ ճիշտ տպագրությունը, որ հրատարակությունը կատարված է օրինակելի բարեկանությամբ, բնագրի ներկայացված է ամենայն մանրամասնություններով ու լուսանկարչական ճշությամբ։ Տարբախտաբար այդպիս չէ։ Տարբեթվերի աղա-

վաղման մի շաբթ օրինակների հետ մենք արդեն առիթ ունեցանք ծանոթանալու: Ցավոք, Հրատարակված բնագրում տեղ են գտել նաև բազմաթիվ ընդօրինակությունների սխալներ, որոնք հետևանք են անփութության և կամ բնագրի սխալ վերծանման: Այդ կարգի մեծա-

քանակ սխալների մասին մոռավոր գաղափար տալու նպատակով ստիլված ենք դեմ առ դեմ մեջ բերել մի երկու հատված Ստեփանոսի համանակագրության բնագրից և պրոֆ. Աշ. Աբրահամյանի հրատարակությունից:

## Ձեռագիր № 8481

1. Էջ 205 թ. «... և գնաց (Զարարէ) յԱրտաւէլ և կոտորեաց. և ի գալ ամն մեռաւ ի ճանապարհին և եղաւ ի Սանահինն ուխտ»:

2. Էջ 209 ա: «Մանգու Դիմուրն գնաց բազում զաւոք ի Հալք և պարտեցաւ ի դաշտն Համսա ի Մըսէրբոյն և փախեաւ. և Արադէն ի Ռահրէն զնաց և դարձաւ ի Բաղդատ»:

3. Էջ 209 ա: «Պակասեաց բարի և խաղաղ աշխարհաշէն ղանն մեր Ապաղայն ի Համիան, ի սահմի ի Բ. (2)»:

Բնագրում Զիե (=1276) թվականի տակ բերված է մի պարբերություն, որի վերջին մասում ասված է. «Եւ Ապաղայն Հոռմը գնաց և վրէժինդիր եղեւ արեան նորա և բազում ամիրայք էստան...» (Էջ 205 թ-209 ա): Այդ պարբերության սկզբի մասը (մինչև «Հոռմը գնաց» բառերը) արտադրված է ձեռագրի 208թ էջում, իսկ շարունակությունը (սկսած «Եւ վրէժինդիր եղեւ» բառերից) հաջորդ՝ 209 ա էջում: Հրատարակիչը շնկատելով այս մասնատված հատվածների կապը, շեւ Ապաղայն Հոռմը գնաց» բառերից հետո դրել է վերջակետ «Եւ շաղկապը դուրս է նետել որպես ավելորդություն, այնուհետև հատվածի շարունակությունը, որպես նախորդի հետ շառնչվող մի բան, տեղափորել է մյուս էջի (Էջ 28) ճակատին՝ ուրէժինդիր եղեւ արեան նորա...» և այլն: Առանց ձեռագրի բննության հնարավոր շի լինում պարզել այս մասնատված հատվածների կապն ու իմաստը: Հրատարակված բնագրի Էջ 23-ի սկզբում կարդում ենք «... զաւրն վրաց ի յետ գնաց և ի Կոռումանա կոտորեաց և դարձոյց»: «Կոռումանա» տեղանվան առթիվ հրատարակիչը գրել է ծանոթագրություն, ուր ասում է. «Յողնում ենք բնագրի ձեռվ» (Էջ 23, ծանոթ. 2): Տարօրինակ է, բայց բնագրում կարդում ենք ոչ «Կոռումանա», այլ «Կոռումանա» (Էջ 205 ա): Այսպիսի օրինակների թիվը հեշտությամբ կարելի է բառապատճել:

Հրատարակված բնագրի բոլոր էջերի ներքեւում պրոդը: Արբանամյանը տվել է տեքստաբանական և երբեմն էլ աղրյուրագիտական ծանոթագրություններ, որոնցից շատերը սխալ կամ անիմաստ են:

Սանոթանանք դրանցից մի քանիսին: Էջ 28-ում կարդում ենք, «... և ոչ կարաց

## Հրատարակված բնագիրը

1. Էջ 23. «Եւ գնաց (Զարարէ) յԱրտաւէլ և կոտորեաց. և ի գալումն մեռաւ ի ճանապարհին. և եղաւ ի Սանահինն ուխտ»:

2. Էջ 28. «Մանգու Դիմուրն գնաց բազում զաւոք ի Հալք և պարտեցաւ ի դաշտը Համսա ի Մըսէրբոյն և փախեաւ. և Արաւէնի մեանիւն գնաց. և դարձաւ Բաղդատ»:

3. Էջ 28. «Պակասեաց բարի և խաղաղ աշխարհաշէն ղանն մեր Ապաղայն յամիսն ի սահմի ի Բ.»:

(Արդունն) առնուլ գտախտ արբայութեան» (ձեռագրում գրված է «արբայութեանն»): Այս հատվածի «զտախտ» բառի մասին գրած ծանոթագրության մեջ Հրատարակիչը գրում է. «Հավանական է-- «զդրախտ»: Եթե ընդունենք Հրատարակիչի կողմից առաջարկված այս «սըրբագրությունը», ապա ստիպված պետք է լինենք համատալու, որ Սրբունն ու Թագուդարը միմյանց դեմ կովել են ոչ թե թագավորական դահմին («ախտ=թախտ արբայութեանն») տիրելու, այլ երկնային դրախտը հափշտակելու համար: Ժամանակագրության մեջ (Էջ 211 թ) ՌՄՂԲ (=1292) և Հայոց ԶԼԹ թվականը առընթեր էպարդում ենք Ստեփանոսի Հայոց: Այս տեղեկության առթիվ Հրատարակիչը տալիս է իր ամենաընդարձակ ծանոթագրություններից մեկը, որը մեջ ենք բերուս ամբողջությամբ. «Օրմանյանը հիմնվելով Սմբատի «Ճամանակագրութեան» շարունակութեանը (sic) վրա, Ստեփանոսի ընտրության տարին է նշանակում 1290 թ. («Աղգապատ», Էջ 1723): Ճիշտը, կարծում ենք, Օրբնլյանի շակորդած ներկա տեղեկությունն է» (Էջ 30, ծանոթ. 3-րդ): Թե ինչու է Ծրբելյանի շներկա տեղեկությունը» ճիշտ, ոչինչ շի տաված: Եթե սխալ կա, ապա այդ ոչ Օրմանյանին է, ոչ Սմբատինը և ոչ էլ մեր Ստեփանոսինը: Թյուրիմացության մեջ է միայն վերոհիշյալ ծանոթագրության հեղինակը: Ժամանակագրության հեղինակ Ստեփանոսը, Սըրբատի «Տարեղրբի» շարունակողի նման, Ստեփանոս Հոռմելայիցու զահակալության թվականը դնում է Հայոց ԶԼԹ (1290) թվականին, որն ամենապարզ թվարանական հաշիվներով տա-

լիս է նույն 1290 թվականը ( $739 + 551 = 1290$ ),<sup>1</sup> և այլ իերպ շեր էլ կարող լինել, որովհետև Ստեփանոս Հոռմելայիցի կաթողիկոսը գահակալել է երեք տարի (1290 թ.-1292 թ.), 1292 թվին Հոռմելայի գրավման ժամանակ նրան գերեվարում են և 1293 թ. նու մահանում է եղիպտական գերության մեջ։ Հրատարակության 28-րդ էջում, ԶԼՌ (1283) թվականին առքնթեր կարդում ենք՝ «... և Պալիալոզն (բնագրում՝ Պալիալոզն) Հոռոմ կայսերին մեռաւ և որդի ընագրում՝ որդին; յաթուն նստաւ»։ Սույն հատվածին տրված ծանոթագրության մեջ Հրատարակիչը գրում է, «գուցե նախագաղափար որինակում եղել է՝ Պալիալոզն՝ Հոռմայ կայսրը Այս ծանոթագրությունն անտարակույս սխալ է այն պարզ պատճառով, որ «Պալիալոզն» Հոռմի կայսր չի եղել (Հրատարակիչը մոռանում է, որ Հոռմելական կայսրությունը պատմական թատերաբեմից վերացել էր 13-րդ դարից հարյուրամյակներ առաջ), այլ եղել է «Հոռոմ» (այսինքն՝ Հույն, բյուզանդացի) կայսրը։ Առաջարկված «սրբագրությունը» սխալ է նաև այն պատճառով, որ գրաբարում, ինչպես և միջին հայերենում, «ը» ըրոշյալ հոդ գոյություն շունի, ուստի և ճիշտ է ձեռագրի գրիչը, երբ գրում է «կայսրն», և սխալ է պրոֆ. Արքահամյանը, երբ «սրբագրում» է «կայսրը»։ Էջ 17-ում՝ ԾԿԲ (1120) թվականին առքնթեր, կարդում ենք՝ «կալաւ ժանն ամս Զ», այս նախադասությանը Հրատարակիչը կցում է ծանոթագրություն։ «Կալաւ Աւժանն» (?) (Հարցանը Հրատարակչինն է, Էջ 17, ծանոթ. 1): Թե ով է «Աւժանը», Հրատարակիչը դժբախտաբար թաքցրել է ընթերցողներից, սակայն կարծում ենք, որ այս դիպրում ևս ճշմարտությունը ձեռագրի գրչի կողմն է և ոչ նրա սրբագրովի, որովհետև 1118 թվականին բյուզանդական դահն է բարձրանում Հովհան (Փան) Երկրորդը, ուստի և «կալաւ ժանն» նշանակում է՝ դահնի տիրապավ Հովհանը։

Էջ 14-ում ՇԶ («1057»), թվականի ձախ կողմում, կարդում ենք, «Դուկինն՝ ամս Ժ (10)՝ Պուկինն» անունով բյուզանդական կայսր շկա, այս հանգամանքը թելադրել է պրոֆ. Արքահամյանին գրել մի ծանոթագրություն, ըստ որի շխոսքը Պուկինի մասին է, որ «ավանական է աղավաղել և այս ձեն է տոել» (Էջ 14, ծանոթ. 4): Մեր բալոր որոնումները «Պուկին» անունով որեւէ նշանակութ թաղարական գործիւ

<sup>1</sup> Մենք աշդեն ամիս Ենք ունեցել նշելու, որ Սմբատի, ինչպես և Ս. Անեցու ժամանակագրություններից օգտվելիս Հիմք պիտք է ընդունել ոչ թե բրիտանական, այլ հայկական թվականները։

դտնելու ուղղությամբ մնացին անհետեանք, ուստի և անհրաժեշտ Ենք համարում հրատարակիչ ուսում ծանոթագրության ասթիվ առ մեր ծոնաթագրությունը։ Զնուագրի գրչի «Դուկինն» և հրատարակիչի «Պուկինն» անուններն աղավաղաված ձևեր են բյուզանդական կայսր Կոստանդին 10-րդ Պուկայի (Ducas) անվան, որը թաղավորել է ժամանակագրության մեջ նշված թվականից 2 տարի հետո (1059—1067 թ. թ.),<sup>2</sup> և ոսին, ինչողեւ ճիշտ նշված է ժամանակագրության մեջ (Էջ 15), հաջորդել է Միխայիլ 6-րդ կայսրը։

Էջ 21-ում Ս. Անեցին պատմում է Սալահագինի կողմից Երաւաղեմի գրավումը և Հայտնում, որ նա այնունզ սրի է մատնում «... Զմիաբանեալ նահատակսն Քրիստոսի, զոր գրեթե անուանեին...»։ Հրատարակիչն ընդունած բառի մասին գրում է, «Մեզ համար անհասկանալի բառ է...» (Էջ 21, ծանոթ. 2): Միեն դժվար եր նայել Հրանսերեն լեզվի ցանկացած բառարունը և դանել այնունզ, որ ֆրեց բերե լատ. frater նշանակում է եղբայրության մասնակիում ։ Ի՞ր բացարությունն էլ գտնըն է 31-րդ Էջի 3-րդ ծանոթագրության մեջ։ այնունզ Հրատարակիչը ցանկանում է սրբագրի բնագրի «Ռատպան Սումա» անձնանունը, որը սրբագրման պահանջ բոլորովին չի զգում։ Էստ Հրատարակիչի այդ անձնանվան միշտ ձեզ պետք է լինի «Ռատպան»։ Սուման պարսկերեն Ռատպան, թողնում ենք մի կողմ սույն սրբագրության դիտական արժեքավորումը, տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է «Ռատպան» բառին առընթեր, փակագծերի մեջ բերված պարսկերեն այն տառախումբը, որ պրոֆ. Արքահամյանը Հրամցնում է ընթերցողներին, ուսպես այդ բառի պարսկերեն տրանսկրիպցիա։ ուստի իսպանացիոթ այդ խմբից մեծ ճիշտ ու չանրով կարելի է դուրս բերել ու շինչ շնչանակող «մրագրան» հնչյունակոմպլեքսը, բայց ոչ երբեք «Ռատպան» բառը։

Կան նաև բազմաթիվ ծանոթագրություններ, որոնք չեն լինի, եթե Հրատարակիչը լավ ծանոթ լիներ Հրատարակողը բնագրի լեզվին։ Բերենք մի բանի փաստեր։

Էջ 23-ում, ՇԿԲ (1250) թվականի դիմաց, կարդում ենք այն մասին, որ Խվանին պատվագան է Խլաթի տմիքայի գերությունից, երբ «... զգուստիր» թամբի բազում աղավանաւք և ծառափիք և լուզով զանձիւք ետ ի գինս իւր յամիրայն...»։ Նշված էջի 3-րդ ծանոթագրությամբ Հրատարակիչն առաջարկում է սրբագրի այդ

2 Ժամանակաւոր ական նաևն անհամանակ շատ կան Ս. Անեցու ժամանակագրության մեջ։

հատվածը և շնորհի փոխարքն դնել պետուն։ Բայց չէ որ իր գինը վճարողն ինքը՝ իվանեն է և ոչ ուրիշները, Հակառակ դեպքում կունենայինք ոչ թե «ետ ի պինս իւր», այլ պետուն ի գինս նորած։

Էջ 20-ում կարդում ենք. «... սպանին և զմեծ եպիսկոպոսն զտէր Ստեփանոս, զկոչեցիալն Երեմիայի որդիք ընդգծված բառի առթիվ Հրատարակիչը պրում է. (Ժանոթ. 1). Հատակիս Ենք ինչպես բնագրում է, այսինքն՝ ցանկանում է ասել, որ շնայած ընագիրը սխալ է, բայց ինքը չի շեղվել նրանից։ Սակայն «զկոչեցեալն» բառը (ինչպես և ամրող նախադասությունը) չառ կանոնավոր ու սովորական բառ է, թվում է, թե Հրատարակիչը մոռանում է, որ գրաբառում հաճախ հայցական հոլովի «զ» նախղիրը, նախադասությունն ավելի որոշակի ու շեշտուած դարձնելու նպատակով, դրվում է և միայն ուղիղ խնդրի գլխավոր անդամի, այլև նրա որոշիչների վրա։

Թերենք ևս մի բնորոշ օրինակ. Էջ 20-ում կարդում ենք՝ «... իշխանն Սալահադին կոչեցեալ... դամենայն դաւառոսն և քաղաքան զոր ժնիք ֆոանգն առաւ։ Միջնադարյան մեր ձեռագրերին ձանոթ ամեն որ հանդիպած կլինի բազմաթիվ դեպքերի, երբ «առնեմ» բայց անցյալ կատարյալ ժամանակում դրված է ինում ոչ թե «ժառանք», այլ «առա ձեռվ։<sup>1</sup> Հակառակ այս բանի, Հրատարակիչը նշված բառի առթիվ գրում է՝ «Նախադասությունն աղավաղված է, Քստերմութին առաջից առչե ինչ որ տառեր են բաց թունվել (sic)» (Էջ 20, Ժանոթ. 4):

Մանոթագրությունների շարքում տեղ են գտել նաև այնպիսիները, որոնք բուրովին ավելորդ և անիմաստ են. Ընթերցողներին ձանձրույթ շպատճառելու համար կսահմանափակենք ստեղծագրիվ օրինակների նշումով։

Չե (—1256) թվականի դիմաց կարդում ենք՝ «Աստ մասաւ Բագու ոանն», Հրատարակիչը ծանոթագրում է, շխոսը Բաթու ոանի մասին է» (Էջ 26, Ժանոթ. 4-րդ):

Ուշ (1221) թվականի դիմաց կարդում ենք՝ «Մէլիք Խաղինն ի Խուաթ երեկ...» (Էջ 23), Համապատասխան ծանոթագրության մեջ Հրատարակիչը գրում է. «Մէլիք Խաղինն (?)» (Էջ 23, Ժանոթ. 7), այսինքն՝ ծանոթագրության մեջ բնագրին ավելացրել է միայն մի շպատճառաբանված հորցական նշան։

Ողջ (1242) թվականի դիմաց կարդում ենք՝ «Թաթարը (բնագրում՝ թաթարն) զեարնուլ քաղաք չառ և քաղում գրեանս և սպառեկեցոյ զերեցին...» (Էջ 25). Համապատաս-

խան ծանոթագրության մեջ, ընդգծված բառի տոթիվ Հրատարակիչը տեղեկացնում է. «մի բառի տեղ մնացել է շգրված» (Էջ 25, Ժանոթ. 1), իրականում բնագրում ոչ մի բառի տեղ բաց չի թողնված։

Հին բնագրերի հետ պործ ունեցող ամեն ոք գիտե, որ եթե Հրատարակող բնագրի որևէ բառի մեջ լրացվում է դրան կողմից անուշադրությամբ բաց թողնված որևէ տառ, ապա բավական է այդ տառը բերել փակագծի մեջ, որպեսզի պարզ լինի ուվալ բառի գրության թերությունը ձևագրում։

Իսկ Հրատարակիչը հաճախ փակագծով լրացնում է որևէ պակասող տառ և շրավարարվելով դրանով, դրում է նաև հատուկ ծանոթադրություն այն մասին, որ փակագծի մեջ բերված տառը ավելացրել է ինքը (Հակառակ դեպքում է, ինչ անհրաժեշտություն կար փակագծի): Բավարարվենք երկու օրինակով։

Էջ 11-ում դրված է «Անլոյ» և հատուկ ծանոթագրությունը ծանուցված է, որ «ընապրում «Անոյ» շւար-ն մենք Ենք ավելացրել» (Ժանոթ. 4):

Էջ 15-ում կարդում ենք՝ «աշխարհ» (ն) և հատուկ ծանոթագրություն այն մասին, որ «Եշխարհ» բառի վերջում «առա-ն մենք ենք ավելացրել» (Ժանոթ. 2): և այլն։

Ինչ պետք է Եզրակացնել վերոհիշյալ դիտողություններից։

Առաջին, Հրատարակության ժամանակակարգության հեղինակ Ետեփանոսը և «Պատմութիւն նահանգին Սիսական» հանրահայտ աշխատության հեղինակ Սա. Օրբելյանը տարբեր անձնավորություններ են։

Երկրորդ, Ստեփանոսի ժամանակագրության Հրատարակության բնագրի սկզբի մասը (ամրողի ճիշտ կեսը) պատկանում է Ս. Անեցուն և առնչվում է, Ստեփանոսի ժամանակադրության հետ միայն այնքանով, որքանով վերջինս իր ժամանակագրությունը գրել է Ս. Անեցուն ժամանակադրության սկզբունքներով, և որպես շարունակություն նրա ժամանակադրության։

Երրորդ, Ստեփանոսի ժամանակագրության Հրատարակության բնագրում Հրատարակիչ անփութության և անբարեխղճության հետևանքով տեղ են գտել բազմաթիվ աղավաղումներ ու ժամանակադրական սխալներ։

Չորրորդ, Հրատարակիչ կողմից դրված ծանոթագրությունների մեծադույն մասը ոչ միայն չի նորաստում բնագրի պարզաբնականը, այլև հաճախ սխալ ու ոչինչ շատող տեղեկություններով, թյուրիմացության մեջ է գցում ընթերցողին։

<sup>1</sup> Հենց սույն բնագրում հանդիպում ենք պատճենի նման դործածության մի ուրիշ օրինակի. «Է իրեն առ զամրոցն» (Էջ 20):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Ներսիսյան—Հայաստանի Ռեզուլուցիոն կոմիտեները . . . . .
Հ. Էլշիբեկյան—Վասպուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովորական Հայաստան . . . . .
Աս. Ասատրյան—Հովհ. Թումանյանը և սուս կլասիկ գրականությունը . . . . .
Գր. Գրիգորյան—Հայ ժողովրդական վեպի մի քանի կերպարների ու պատկերների իդեալական-հասարակական բովանդակությունը . . . . .

### ԴՐԱԽԱՆՈՒՐՅՈՒՑ

Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան—Ինչպես չոլետք է հրատարակվեն պատմական սկզբանադրյուրները . . . . .
---

## СОДЕРЖАНИЕ

A. Нерсисян—Революционные комитеты Армении . . . . .
А. Элшибекян—Васпураканские армяне в Месопотамии и их возвращение в Советскую Армению . . . . .
Ас. Асатрян—Ованес Туманян и русская классическая литература . . . . .
Гр. Григорян—Общественное содержание некоторых образов армянского народного эпоса . . . . .

### Рецензия

Լ. Хачикян, В. Акопян—Как не должны издаваться исторические первоисточники . . . . .
--



Հանձնված է արտադրության 21/II 1949 թ., ստորագրված է տպագրելու 7/IV 1949 թ.  
Վֆ 01551, պատվեր 106. հրատ. 608. տիրաժ 500, տպագրական 5 $\frac{1}{2}$  մամ., մեկ  
մամուլում 53,700 տպանիշ:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220034309

(1043)

